ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎ. ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ 1843 Թ. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1842 թ. մարտի 26-ին երկարատև հիվանդությունից հետո Էջմիածնում մահկանացուն կնքեց Հովհաննես Ը Կարբեցի Ամենայն հայոց կաթողիկոսը: Հայոց եկեղեցու կանոնակարգի համաձայն՝ պետք է հայտարարվեր հայոց հայրապետի նոր ընտրություն: Այն, որ հայոց վեհափառի ընտրությունները մշտապես աչքի են ընկել հոգևոր-քաղաքական բուռն իրադարձություններով, նորություն չէր հայ եկեղեցու բազմադարյան պատմության համար: Այդ առումով 1843 թ. ընտրությունը բացառություն չէր:

Ներսես Աշտարակեցու ընտրության մասին մեզանում հրապարակումների ու մեկնաբանությունների պակաս կարծես թե չկա: Սակայն Մատենադարանի Լազարյանների արխիվի հերթական հատորի ուսումնասիրության ժամանակ այդ թեմային նվիրված նամակների առատությունն ուղղակի թելադրեց ներկա հրապարակման անհրաժեշտությունը. դրանք ոչ միայն նոր մանրամասներ են հաղորդում հայոց կաթողիկոսի ընտրության մասին, այլև ներկայացնում են տվյալ ժամանակահատվածի հայ հասարակական-քաղաքական կյանքում հաստատված իրողություններն ու ելևէջները:

Դեռևս Խաչատուր Լազարյանին ուղղված՝ Ներսես արքեպիսկոպոսի 1842 թ. հունիսին գրված նամակից արդեն ակնհայտ է, որ վերջինս, որը ժամանակին մեծ հավակնություններ է ունեցել հայոց հայրապետի գահի հանդեպ (հիշենք Եփրեմ կաթողիկոսի օրոք նրա ջանքերն այդ ուղղությամբ և նրա ակնհայտ անհաղուրժողական վերաբերմունքը Հովհաննես Ը կաթողիկոսի հանդեպ), այդուհանդերձ պայքարի սկզբում բավականին չեզոք պահվածք է դրսևորել: Ուստի Խաչատուր Լազարյանին ուղղված նամակում Ներսեսն այս հարցերի շուրջ գրում է. «Վասն վախճանի Յոհաննէս կաթողիկոսի լուեալ էի և յառաջ, քան զայս գրութենէ Ձերդ գերազանցութեանն ունեի և զգիր սինոդի Էջմիածնի Գրիգորեան հայոց, այլ վասն ընտրութեան տեղակալի նորա չունեմ ցարդ զգիր սինոդին, որպես մարթ է լինել ըստ տասներկուերորդ յօդուածոյն կարգադրութեանն բարձրագոյն հաստատեցելոյ յաղագս կարգադրութեան եկեղեցւոյ Գրիգորեան հայոց: Ես չունեմ բնաւ առ այն

զնպատակ մտաց իմոց և ոչ զներքին խորհուրդ…»[1]: Փաստորեն, Ներսես արքեպիսկոպոսը հաստատում է, որ ինքը երբևէ չի տենչացել այդ պաշտոնը և բազմիցս հրաժարվել է իրեն արված առաջարկներից ու այդ պահին էլ իրեն անարժան է համարում վեհափառի տեղի համար: Հավելենք, որ նամակը գրված է 1842 թ. հունիսի 13-ին, այսինքն՝ կաթողիկոսի մահվանից գրեթե երեք ամիս անց, երբ արդեն պիտի ի հայտ եկած լինեին գահի համար իրական թեկնածուները: Եվ հետո. Խաչատուր Լազարյանն այս հարցերում ոչ միայն պատահական անձնավորություն չէր, այլև, ինչպես պիտի հաստատվի մեր այս հրապարակման մեջ, իրավամբ առաջին շահագրգիռ մարդն էր: Ավելին, նամակներից ակնհայտ երևում է, որ բավականին հետամուտ է եղել սկսված գործը տրամաբանական ավարտին հասցնելուն:

Այդուհանդերձ, ինչպես և սպասվում էր, Էջմիածնի սինոդը հատուկ գրությամբ 1842 թ. հուլիսի 10-ին տեղեկացնում է Ներսես արքեպիսկոպոսին, որ իբրև պատգամավոր կաթողիկոսական ընտրություններին վերաբերող հարցերի առնչությամբ պետք է 1843 թ. մարտին ներկայանա Էջմիածին: «Հրաման Նորին կայսերական մեծութեան՝ ինքնակալին Ամենայն Ռուսաց ի լուսաւորչական հայոց, սինհոդոսի Էջմիածնի վիճակաւոր առաջնորդին Բեսարաբիոյ բարձր սրբազան արքեպիսկոպոսին Ներսեսի և ասպետի… յաղագս առնելոյ զտնօրենութիւն վասն ընտրութեան նորոյ կաթուղիկոսի ի պատճառս մահուան կաթուղիկոսի Ամենայն Հայոց Յոհաննու… հանեալ հրաման բարձր սրբազնութեան Ձերում ի յաւելումն հրամանի սորին առ Ձեզ ի 27 մարտի անցելոյ… նշանակելոյ զպատգամաւորս հոգեւորականս և զաշխարհականս…»[2],- ասվում էր ուղերձում:

Արդեն 1842 թ. աշնանից սկսած՝ հայոց հայրապետի ընտրությունների գործընթացը նոր թափ է ստանում: Հատկապես ակտիվանում է կովկասահայ հատվածը. սեպտեմբերի 9-ին Վրաստանի նահանգապետին համապատասխան դիմում է ներկայացնում Թիֆլիսի հայությունը: Եվ թեև Ներսեսն արդեն երկար ժամանակ Վիրահայոց թեմի առաջնորդ չէր, սակայն ակնածանքով էին հիշում նրա առաջնորդության տարիները և կատարած գործերը, ուստի նրանք հատուկ գրությամբ դիմում են Ռուսաստանի ռազմական մինիստր Ա. Ի. Չեռնիշևին՝ խնդրելով միջնորդել թագավորի առաջ Ներսես Աշտարակեցուն կաթողիկոս կարգելու համար: Վերջինս պատասխան գրությունում տեղեկացրել էր թիֆլիսահայերին, որ հայոց կաթողիկոսին ընտրում է ողջ հայությունը, ուստի նրանց դիմումին ինքը չի կարող ընթացք տալ: «Թիֆլիսի հայերը դիմել են պարոն ռազմական նախարարին՝ հայկական թեմի գերաշնորհ կառավարիչ Ներսես արքեպիսկոպոսին՝ գերագույն պատրիարք ընտրելու և հաստատելու երաշխավորության

[1]Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 107, գ. 44, վավ. 50, թ. 1:
[2] Նույն տեղում, վավ. 53, թ. 1:

խնդրանքով: Թեպետ իշխան Ալեքսանդր Իվանովիչին հայտնի են այս արժանի արքեպիսկոպոսի նախկին ծառայությունները, սակայն Զերդ Բարեծնությունը, ի գիտություն ընդունելով, որ Էջմիածնի պատրիարքի ընտրությունն ու հաստատումը կարգավորվում է հատուկ կանոններով, իրեն իրավասու չի համարում տեղեկացնելու Տիրակալ-կայսրին՝ մի մարզի հայերի այսպիսի ցանկության մասին…»[3],-նշվում էր վավերագրում:

Այդ ընթացքում ձեռքերը ծալած չեն նստում Ներսեսի առաջադրմանը դեմ հոգևորականները: Նրանք ամեն տեսակի ամբաստանագրեր են պատրաստում և ուղարկում ընտրությանը մասնակից ժողովականներին՝ փորձելով խափանել Ներսեսի կաթողիկոս առաջադրելու գործընթացը: Այդ ամբաստանագրերից որոշ մանրամասներ կան Խաչատուր Լազարյանին ուղղված Ներսեսի նամակում. «… նոքա ոչ կամեցեալ հատուցանել ընդդեմ դարձան մեզ և գրեցին առ Զերդ գերազանցութիւնն… և ետ բազում տարաձայնութեանց նոցա վասն չկամելոյն հատուցանել զայն գումար եղեալ առ ինքեանս..»[4]:

Եվ իսկապես, Լազարյանների արխիվում պահպանված է Խաչատուր Լազարյանին ուղղված Հովհաննես կաթողիկոսի կոնդակը, որով խնդրում էր նրա միջնորդությունը՝ կարգի հրավիրելու Ներսես արքեպիսկոպոսին. բողոքում էր, որ նա իր թեմից հավաքած գումարների մասին հաշվետվություն չի ներկայացնում, հովանավորում է կասկածելի վարքով մի երեցկնոջ, հաշվի չի նստում կաթողիկոսի և սինոդի հետ: «Քաջայայտ է առհասարակ ամենայն բարեմիտ հասարակութեանն հայոց Ռուսաստանի իմումս հայրապետական հովուապետութեան յանձն եղելոյ, թե ոչ հայեցեալ ընդ բազմազան պատճառանս անբաւականութեանց թելադրեալս յօրնէ անտի ընտրութեան և հաստատութեան իմոյ յաթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց ի կողմանէ թեմական արքեպիսկոպոսի Բեսարաբիոյ և Նախիջևանու Ներսեսի ես միշտ և հանապազ պահպանեալ եմ և պահպան եմ ցայսօր – ժամանակի զխորին իմն յարգութիւն… ոչ կատարէ նույնպես զբազում յանձնարարութիւնն սինհոդոսին Էջմիածնի... և զայլ սրբազնացեալ իրս առանց տալոյ վասն այնօրիկ ամենայնի զհաշիվ ծայրագույն հոգևոր իշխանութեանն իւրում…»[5],-գրում էր Հովհաննես Կարբեցին: Հավելենք, որ նամակը գրվել է 1842 թ. մարտի 13-ին, այսինքն՝ կաթողիկոսի մահից ընդամենը երկու շաբաթ առաջ:

Բնականաբար, նամակի բովանդակությունը Խաչատուր Լազարյանը հաղորդում է Ներսեսին՝ ակնկալելով նաև վերջինիս բացատրությունը ներկայացված մեղադրանքների վերաբերյալ: Ներսեսի արձագանքը չի ուշանում. արդեն ապրիլի 8-ին նամակով պատասխանե-

[3] Նույն տեղում, վավ. 54, թ. 1-2:
[4] Նույն տեղում, վավ. 58, թ. 1:
[5] Նույն տեղում, վավ. 69, թ. 1:

լով հանգուցյալ կաթողիկոսի ներկայացրած մեղադրանքներին՝ Ներսեսն այդ ամենը համարում է անհիմն: Ներսես արքեպիսկոպոսը միաժամանակ գրում է, որ ամբողջ կյանքում ոչ մեկն իրենից չի դժգոհել, բացի մի քանի հոգևորականից. նշում է տեր Հարություն Բարխուդարյանցի, Սինան Սինանյան Պոլսեցու և Պետրոս Մամիկոնյանի անունները»[6]:

Հատկանշական է, որ նույնպիսի բովանդակությամբ մի նամակ էլ Ներսես արքեպիսկոպոսն ուղարկում է 1842 թ. օգոստոսին. Կնշանակի՝ Ներսեսի հանդեպ ամբաստանագրերը շարունակում էին նոր թափ ստանալ, ինչի մասին Խաչատուր Լազարյանը Ներսեսին է հաղորդում գաղտնի նամակով (իսկ թե ինչու գաղտնի նամակով, կռահել, իհարկե, կարելի է, սակայն, ցավոք, նամակը չգտնվեց արխիվի ֆոնդերում): Ներսես արքեպիսկոպոսն այս անգամ էլ հանգամանալից բացատրություն է տալիս Խաչատուր Լազարյանին իր և կաթողիկոսի հարաբերությունների, եկեղեցական գումարների և նամակում ակնարկված զարդերի մասին: Այստեղ էլ կրկին նշում է, որ իր դեմ ամբաստանությունների հեղնակներն են տեր Հարություն Բարխուդարյանցը և Սինան Սինանյան Պոլսեցին[7], իսկ նամակի վերջում ավելացնում է. «… այս ամենայն անարժան գրագրութեանց միշտ հոգով և ճշմարտութեամբ և իսկապէս վերապատուութեամբ Ձերում անձին…»[8]: Մեր կարծիքով, Ներսեսի ուղարկած պատասխանները Խաչատուր Լազարյանը փոխանցում էր ռուսաց կառավարությանը՝ Ներսեսի թեկնածությունը պաշտպանելու համար: Այլ խոսքով՝ այդ բացատրությունները Խաչատուր Լազարյանին անհրաժեշտ էին ռուսական արքունիքի աջակցությունը ստանալու համար:

Այն, որ Խաչատուր Լազարյանի հորդորով է Ներսես արքեպիսկոպոսը ձեռնամուխ եղել կաթողիկոսական գահի համար պայքարին, ապացուցում են Մատենադարանի Լազարյան արխիվում պահպանված նամակները: Ներսես արքեպիսկոպոսը պատրաստակամություն է հայտնում մասնակցելու այդ պայքարին և Խաչատուր Լազարյանի օժանդակությամբ քայլ առ քայլ սկսում է ծրագրել իր հետագա անելիքները: 1842 թ. օգոստոսին ուղարկած նամակում Ներսեսը Խաչատուր Լազարյանի հետ խորհրդածում է իրենց թեմից աշխարհական պատգամավորների առաջադրման հարցի շուրջ: Բնականաբար, նրանք պետք է ունենային նաև Խաչատուր Լազարյանի երաշխավորությունը. «... եւ ըստ որում ի յօդուածն 13 նշանակել գտանի, զի յիւրաքանչիւր վիճակէ առ ընտրութիւն կաթուղիկոսի լինիցին երկու դեպուտատք՝ ի եկեղեցական և ի ժողովրդական, և պատգամաւորն եկեղեցականաց կամ դեպուտատն եղիցի կամ ինքն վիճակաւոր արքեպիսկոպոսն, կամ

[6] Նույն տեղում, վավ. 70, թ. 1:
[7] Տե՛ս նույն տեղը, վավ. 58, թ. 1:
[8] Նույն տեղում, թ. 2:

այլ ոք եկեղեցական նշանակեալ ի վիճակաւորէն, իսկ պատգամաւորն ժողովրդական եղիցի ընտրեալ ի հասարակութենէ ամենայն իշխավորաց՝ ի հարիւրապետաց, ի մէլիքաց և յայլոց պատուելի աշխարհականաց Գրիգորեան հայոց եկեղեցւոյ անդամոց»[9]:

Արդեն 1843 թ. փետրվարի 18-ին Ներսես արքեպիսկոպոսը հանդես է գալիս հայտարարությամբ, որտեղ ներկայացնում է իր դատողությունները կաթողիկոսական թեկնածուի արժանիքների մասին. «… յայտնեմ զիմ զդատողութիւնն վասն ընտրութեանց նորոգ կաթողիկոսի՝ պատրիարքի Ամենայն Հայոց և Սրբոյ Էջմիածնի, զի արժանաւոր ընտրութիւն յառաջ գայ՝ ի կատարեալ ծանօթութեանց անձանց և ամենայն անձնական և հոգեկան հանգամանաց իւրաքանչիւրոց նոցա, որք իցեն ենթարկեալք առ այն գերակայ եկեղեցական նախագահութեան կաթողիկոս և պատրիարք… յաղագս անձնական հանգամանաց եպիսկոպոսաց ընթեռնումք զնախագրեալսն անոթոյն ընտրութեան՝ պարտ է եպիսկոպոսի անարատ լինել որպէս և Աստուծոյ տնտեսի՝ հեզ, ցած, պարկեշտ, արդար, սուրբ, ժուժկալ, հանդարտ, հիւրասէր, բարեսէր, ուսուցիչ, մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ արծաթասէր, մի՛ զօշաքաղ…»[10]:

Բնականաբար, ներկայացված չափանիշները Ներսեսը պատահական չէր առաջադրել ու շեշտել. դրանով նա արդեն իսկ ընդգծում է իր բարեմասնությունները, թեպետ այդ մասին դեռևս հստակ հայտարարություն չի անում, ավելին՝ տալիս է կաթողիկոսական գահի համար իրեն նախընտրելի թեկնածուների անունները. «...և ըստ այսոցիկ ահա վասն եպիսկոպոսապետի, հայրապետի, կաթողիկոսի և պատրիարգի մարթ է վայելչական բաղդատութեամբ այնոցիկ անձնականաց՝ լինել ըստ կարելոյն ընտրութեան արժանաւոր… ուստի ըստ իմում այնպիսի դատողութեանց ի միջի յայտնի եղելոցն ինձ եպիսկոպոսաց՝ ես և ամենայն միաբանութիւնք այսմիկ իմում վիճակի հոգեւորականաց համաձայնինք վասն ընտրութեանց չորից յաղագս կաթուղիկոսութեան և պատրիարգութեան Ամենայն Հայոց՝ ըստ իւրաքանչիւրոց նոցին ինձ յայտնի եղեալ հանգամանաց. առաջին արժանաւոր համարիմ զսրբազան Պողոս արքեպիսկոպոսն, որ երբեմն պատրիարգ էր ի Կոստանդնուպօլիս և այժմ գտանի յԵրուսաղէմ, երկրորդ՝ զսրբազան Բարսեղ արքեպիսկոպոսն նախապատիւ անդամն սինոդի Սրբոյ Էջմիածնի, երրորդ՝ զսրբազան Մատթեոս արքեպիսկոպոսն Զմիւռնիոյ… և չորրորդ՝ զսրբազան Յովհաննէս եպիսկոպոսն Շահխաթունեան…»[11]:

Այդ ընթացքում Ներսեսին աջակցելու հերթական քայլն են կատարում Լազարյանները. նրանք նամակով դիմում են Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Արտեմ Խալիպովին, որպեսզի կաթողիկոսական գահի

[9] Նույն տեղում, վավ. 61, թ. 1:
[10] Նույն տեղում, վավ. 120, թ. 1:
[11] Նույն տեղում, թ. 2:

համար թեկնածու առաջադրվի Ներսես արքեպիսկոպոսը՝ հաշվի առնելով նրա բազում ծառայությունները համայնքին: Պատասխանը չի ուշանում. մարտի 9-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին ուղղված նամակում հայտնվում է, որ առաջնորդվելով նրանց նամակներով (խոստովանությունն, իհարկե, ուշագրավ է), քաղաքի հասարակությունը կաթողիկոսության թեկնածու է առաջադրել Ներսես արքեպիսկոպոսին և այդ մասին պաշտոնական գրություններ է ուղարկել Էջմիածնի սինոդին և Վրաստանի կուսակալ գեն. Նեյդգարդին. «… առաքեցաք զայն առ կուսակալն Վրաստանի, նաև համեմատ այնմ յօրինեաց և զառանձինն գրաւոր դատողութիւն մեր, յորում զբարձր սրբազան Ներսէս արքեպիսկոպոսին միայն ճանաչելով արժանաւոր կոչման կաթողիկոսի Հայոց, այն այսու իսկ առաքեցաք զայն ի սինհոդոսն Էջմիածնի, զորոյ և ըստ պատճենն ունիմ պատիւ առաքել ընդ սմին առ բարձր վեհանձնութիւն Ձեր վասն ծանոթութեան»[12]:

Շուտով Նոր Նախիջևանին միանում է Վիրահայոց թեմը. Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ հատուկ նամակ է ուղարկվում Խաչատուր Լազարյանին (այստեղ էլ, կարծում ենք, չպետք է բացառել Խաչատուր Լազարյանի միջամտությունը): Լազարյանների արխիվում պահպանված 1843 թ. մարտի 2-ի նամակում թեմական առաջնորդն իր գոհունակությունն է հայտնում Ներսեսին կաթողիկոսի պաշտոնում հաստատելու կապակցությամբ: «Բարձրագոյն բարեհաճութեամբ հաստատեալ է յԱթոռ ընդհանուր հայրապետութեան ազգին Արամեան զբարձր զսրբազան արքեպիսկոպոսն Ներսէս, զվկայաբանեալն ամենայն բարեհամբոյր վարուք հոգւոյ մտաց և մարմնոյ, որում ընդհանուր ազգ մեր ի հերուն հետէ ակնկալեալ սպասէր… ես իբրու հօտապետ իմում վիճակեալ հօտի շնորհավորեալ վեհազն պայազատացդ զընտրութիւն արժանաժառանգ փոխանորդի՝ բազմաչարչար վկային Քրիստոսի լուսավորչին ասեմ մերս Հայաստանի…»[13],-ասվում էր Կարապետ արքեպիսկոպոսի նամակում:

Վիրահայոց առաջնորդի նամակին հետևում է Անդրկովկասի հայության նամակը Խաչատուր Լազարյանին, որը լիովին հաստատում է թեմական առաջնորդի ցանկությունը. «Անդրկովկասում ապրող հայերը… հաստատապես վստահ են, որ միայն Ներսես արքեպիսկոպոսն է ի վիճակի բարձրացնել հայ հոգևորականությանը...»[14]:

Սակայն 1843 թ. ապրիլի 8-ին Խաչատուր Լազարյանին ուղղված չորսէջանոց նամակում Ներսեսն ամենևին չի շտապում հայտարարել կաթողիկոսական իր հավակնությունների մասին, թեպետ ակնհայտ է, որ անթաքույց արդեն տվել էր իր համաձայնությունը, այլապես այնպիսի ազդեցիկ համայնքներ, ինչպիսիք Թիֆլիսը, Նոր Նախիջևանը,

[12] Նույն տեղում, վավ. 122, թ. 1:
[13] Նույն տեղում, վավ. 138, թ. 1:
[14] Նույն տեղում, թղթ. 137, վավ. 13, թ. 1:

Մոսկվան և Պետերբուրգն էին, չէին շտապի իրենց աջակցությունը հայտնել Ներսեսին: Հանգամանորեն ներկայացնելով կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալված իրադարձությունները՝ Ներսեսը հայտնում է այդ պատվավոր պաշտոնից հրաժարվելու մասին և հիմնավորում իր հրաժարականը. «Սակայն ի վերայ այնր ամենայնի, որպէս յառաջագոյն ևս գրեալ եմ առ Ձեզ, զայդ կոչումն այժմ առաւել անարգութիւն համարին ինձ՝ քան արժանաւորութիւն իմն. քանզի ամենայն ձայն այնմ կոչումն առանց նշանակութեան էական իրի ի զուր իմն է….»[15]: Ավելին, Ներսեսը գտնում էր, որ կաթողիկոսի կոչումը կրելը մեծ պատասխանատվություն է. «…յորում դրութեան այժմ գտանի կոչումն կաթողիկոսութեան կամ պատրիարգութեան Ամենայն Հայոց և առաւել քան զայն՝ ունողն կոչման իրիք՝ ամենայն կարողութեամբ և զօրութեամբ պարտավոր է ջանալ համաձայն կոչմանցն վայելչացուցանել զգործն…»[16]:

Սակայն թեմակալ առաջնորդների կարծիքները բավարար չէին Ներսեսին առաջադրելու համար. Լազարյանները ցանկանում էին իմանալ էջմիածնական մյուս ազդեցիկ հոգևորականների կարծիքները Ներսեսի առաջադրման մասին: Խնդիրն այն է, որ Լազարյաններին լուրեր էին հասնում, թե իբր շատ էջմիածնականներ դեմ են Ներսեսի առաջադրմանը, ուստի առանձին նամակներով հարցում են արել այդ մասին: Այդ առումով ուշագրավ է Բարսեղ արքեպիսկոպոսի պատասխան նամակը Խաչատուր Լազարյանին: Անդրադառնալով Ներսես արքեպիսկոպոսին կաթողիկոս առաջադրելու հարցին՝ վերջինս հայտնում է, որ լուրերը, թե իբր Էջմիածնի միաբանները դեմ են Ներսեսի թեկնածությանը, անհիմն են: «Ինչ-ինչ անձինք,- գրում է Բարսեղ արքեպիսկոպոսը,- ոմանք դրդեալ յանբարեմտութենէ և այլք յանգիտութենէ իրացն ի ժամ ընտրութեանն և յառաջ, քան զայն համբաւեալ են ըստ սուտ լուրս, թե միաբանք Էջմիածնի ոչ կամէին ընտրել կաթողիկոս զարհին վերոյգրեալ, գուցէ այս լուր անախորժ ձանձրացուցեալ իցէ և զՁեր լսելիս, այլ ես՝ իբրև ատենապետ սինոնհոդոսին Էջմիածնի, յընթացս ավելի քան ամբողջ միոյ ամի կատարող պաշտաման կաթուղիկոսի ըստ կոչմանս պարտաւորութեան, միանգամայն մերձաւորագոյն բարեկամ արքեպիսկոպոսին Ներսեսի, որ չէ թաքուն և ի նմանէ, վստահանամ հաւաստեցուցանել զՁեզ, թե՝ չիք ոք ի միջի մերու յականաւորիցն ի միաբանութենէ, որ չիցէ բարեկամ և ցանկացող Ներսեսի…»[17]: Հաղորդագրությունում Բարսեղ արքեպիսկոպոսը խնդրում և ակնկալում է Խաչատուր Լազարյանի օժանդակությունը Ներսեսին կաթողիկոս առաջադրելու գործում, միաժամանակ ցանկալի է համարում, որ նախքան Էջմիածին գալը կաթողիկոսը հանդիպում ունենա

[15] Նույն տեղում, վավ.131, թ. 1:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, վավ. 145, թ. 1:

ռուսաց թագավորի հետ. «Գերազա՛նց իշխան, մեք արարաք զկախեալն ի մէնջ, այժմ մնայ Ձեզ պսակել և արդիւնաւորել զսկզբնաւորեալն ի մէնջ, այն է՝ ջանալ փութացուցանել զհաստատութիւնն նորա, և որ առաւելն է՝ գտանել զելս իրաց ընդ ձեռն բարեկամ նախարարաց տեղւոյդ, զի արքեպիսկոպոսն Ներսէս զկնի հաստատութեանն ունիցի և զմիջոցս նախքան զգալուստն իւր յաթոռս սուրբ՝ տեսանելոյ զամենոդորմ կայսրն ի Սանկտ-Պետերբուրգ…»[18]:

Այն, որ Ներսես Աշտարակեցու կաթողիկոս ընտրվելու հարցում վճռական է եղել Խաչատուր Լազարյանի միջամտությունը, կասկածից դուրս է: Այս մասին են վկայում Լազարյանների արխիվում պահպանված նամակներն ու վավերագրերը: Այսպես, ներկայացվող վավերագիրը Լազարյանների կողմից կազմված փաստաթուղթ է, որը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Ներսես Աշտարակեցու կաթողիկոս ընտրվելու մասին»: «Հայ ժողովուրդը,- կարդում ենք վավերագրում,- հնագույն իր եկեղեցու հանդեպ սիրով ու կապվածությամբ, այդ զգացումները ցույց տվեց այժմ՝ Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության ժամանակ: Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննեսի մահվան լուրը հայտնելուց հետո ողջ հոգևորականության և Թուրքիայում, Պարսկաստանում, Հնդկաստանում և Անդրկովկասյան երկրամասում և Ռուսաստանի կայսրությունում ապրող հայ ժողովրդի հայացքները սիրով և հույսով ուղղվեցին դեպի կաթողիկոսական աթոռի միակամ և միաձայն ընտրությունը…»[19]:

Վավերագրում Լազարյանները նախ և առաջ ներկայացնում են Ներսեսի ընտրության վրա կանգ առնելու հիմնավորումը. «Ներսես արքեպիսկոպոսի բավականին հարգանքի արժանացած ուղղամիտ վարքագիծը, Հայ լուսավորչական, ռուսական Ուղղափառ եկեղեցու …արևելյան հայկական եկեղեցու հնագույն ավանդույթների խստորեն պահպանումը և ընդհանրապես հայ ժողովրդի համար կատարած անհաշիվ սխրանքները… Ընտրական կոլեգիայի անդամները, որոնք էջմիածին էին ժամանել շատ երկրներից… միաձայն և հանդիսավորությամբ Ներսեսին ընտրեցին որպես Գլխավոր հովիվ: Կոստանդնուպոլսի հայերը… խնդրանքով դիմելով Օսմանյան կայսրությունում ռուս դեսպանին՝ երաշխավորել Կայսեր առաջ հաստատելու ժողովրդական ընտրությունը»[20]: Ավելին, Լազարյանները Ներսես Աշտարակեցու ընտրությանը հաղորդել են համահայկական բնույթ: «Երբևէ հայ ժողովուրդը,- ասվում էր փաստաթղթում,- որը տարածված է աշխարհի տարբեր մասերում… ունենալով տարբեր հետաքրքրություններ, այնքան բաժանված էին ֆիզիկապես և նույնիսկ բարոյապես… այդպիսի միասնականությամբ երբեք աչքի չէր ընկել, ինչպես դա եղավ պատրիարք Հով-

[18] Նույն տեղում, թ. 1-2:
[19] Նույն տեղում, թ. 1-2:
[20] Նույն տեղում, թղթ. 137, վավ. 11, թ. 1:

հաննեսի ժառանգորդի ընտրության ժամանակ: Կայսր տիրակալ Նիկոլայ Պավլովիչը տեղեկանալով հայ ժողովրդի ցանկության մասին, ժողովուրդ, որը նվիրված է իրեն ամենուրեք՝ Հնդկաստանից և Պարսկաստանից սկսած մինչև Փոքր Ասիայի հովիտները, Բոսֆորի ափերին, ինքը ևս ցանկություն է հայտնել անձամբ տեսակցել արքեպիսկոպոս Ներսեսին, որն այդքան սիրված և հարգված է իր ժողովրդի կողմից»[21]:

Իհարկե, Լազարյանները չեն բավարարվել միայն նրա ընտրության մասին հանգամանալից փաստաթուղթ կազմելով, արխիվում պահպանված է ուշագրավ մեկ փաստաթուղթ ևս, որն ամբողջովին նվիրված է Ներսես արքեպիսկոպոսի գործունեության գնահատությանը և կրում է «Նոթեր Ներսես արքեպիսկոպոսի մասին» վերնագիրը: «Արքեպիսկոպոս Ներսեսի ռուսական կառավարությանը ցուցաբերած անսահման նվիրվածությունը գալիս է դեռևս հանգուցյալ իշխան Ցիցիանովի կառավարման ժամանակներից… նրա ծառայության օգուտները կարելի է տեսնել 1804 թ. Երևանի բերդի տակ, 100 հազ. բանակի դեմ ճակատամարտում՝ անձամբ Շահի հրամանատարությամբ: Հետո նրան կարելի է տեսնել գեն. Նեսվետանի և իշխան Սավարսամիձեի գաղտնի հանձնարարությունները կատարելիս… և վերջապես, Պարսկաստանի դեմ վերջին պատերազմի ժամանակ, որում նա մեծ ծառայություններ մատուցեց ռուսական կայսրությանը…»[22]: Փաստաթղթում նշվում է, որ Ներսես արքեպիսկոպոսը նույնքան ջերմեռանդ է եղել նաև եկեղեցական հարցերում. թվարկվում են այն գործերը, որոնց նախաձեռնողը եղել է Ներսեսը. «Հինգ տարվա ընթացքում գտնվելով Էջմիածնում նախկին կաթողիկոս Եփրեմի օրոք, նա կարողացել է մարել կուտակված պարտքերը, փոխել է տվել եկեղեցական ավագներին, որոնց ձեռքում կենտրոնացած էին ողջ եկամուտները…»[23]: Եվ իհարկե, փաստաթղթում առանձնապես շեշտվում էր նրա կրթալուսավորչական գործունեությունը. «1816 թ. երկրամասի կառավարչապետի թույլտվությամբ բացել է հայկական ուսումնարան: Նրա հմտությունները և իրեն բնորոշ անշահախնդրությունը ոչ միայն հայերին թեքեցին դեպի հանրօգուտ նվիրատվություններ, այլև նույնիսկ այդ գործում շահագրգռեցին վրացիներին, որոնք հնուց ի վեր հակասություններ ունեին հայերի հետ, և նրանց մղեցին դեպի հանրօգուտ համագործակցություն…»[24]:

Վավերագրում հստակ գնահատական է տրված նաև Ներսես Աշտարակեցու քաղաքական գործունեությանը: Հարկ է նշել, որ դրսևորած քաղաքական վարքագծի առումով Ներսեսն իսկապես առանձնա-

[21] Նույն տեղում, թ. 2-3:
[22] Նույն տեղում, վավ. 12, թ. 1:
[23] Նույն տեղում, թ. 2:
[24] Նույն տեղում, թ. 3:

նում էր հայ մյուս բարձրաստիճան հոգևորականներից. չկար քաղաքական կարևորության որևէ հարց, որին Ներսեսն առնչություն չունենար կամ չարտահայտեր իր տեսակետը, անգամ եթե այն չէր համընկնում ռուսական կառավարության դիրքորոշմանը: «…Վրաստանը, ռուսական կայսրությանը միացման ժամանակներից սկսած, այդ երկրամասի բոլոր քաղաքական անցքերը նրան հետաքրքրում էին,- ասվում էր այնուհետև փաստաթղթում: - Նա լայն կապեր ուներ ոչ միայն Պարսկաստանում ապրող հայերի հետ, որոնք օգտվում էին Շահի և տեղի բարձրաստիճան իշխանավորների հատուկ հովանավորությունից, այլև նույնիսկ պարսկական արքունիքի աստիճանավորների հետ, որոնք դժգոհություն ունեին Կաջարների կառավարող արքայատոհմից: Անդրկովկասի ողջ հայությունը հանգստության մեջ էր՝ Ներսեսի մեջ տեսնելով իրենց պաշտպանյալին, ով վայելում է կառավարության վստահությունը…»[25]: Փաստաթուղթն ավարտվում է հետաքրքիր ընդգծումով. «Ներկայումս լուրեր են հասնում, թե Կոստանդնուպոլսի հայերը ցանկանում են վերականգնել Կիլիկիայում հայկական հատուկ պատրիարքությունը Սսի եկեղեցում և նույնիսկ պատրաստակամություն են հայտնել իրենց ենթարկել թուրքահպատակ հայերին: Այս ձեռնարկը կհանգեցնի Էջմիածնի պատրիարքության ազդեցության թուլացմանը և ընդհանրապես բացասաբար կանդրադառնա ողջ հայության վրա… Արքեպիսկոպոս Ներսեսը լիովին ի վիճակի է կանխել այս վնասաբեր ձեռնարկը»[26]:

Ուստի պատահական չէ, որ կաթողիկոս ընտրվելու առթիվ ռուսահայ կենտրոնները շնորհավորել են հատկապես Լազարյաններին: Այսպես, Աստրախանի հայության կողմից ուղարկված նամակում ասվում էր. «Հասարակութիւն լցեալ անպատում խնդութեամբ ի սիրտ և ի հոգի միաձայն բերանով վերառաքեաց զկաթոգին մաղթանքս իւր առ ամենաբարձրեալն Աստուած վասն առողջութեան պատուական անձին զերերջանիկ նորընտիր հայրապետի մերոյ և պահպանութեան բարեբեր կենաց նորա յաւիտեանս ժամանակաց ի բարօրութիւն ազգիս ողորմելոյ… 31 հոկտեմբերի 1843 ամի: Աստրախան»[27]:

Վերջապես, 1843 թ. ապրիլի 15-17-ը Էջմիածնում կայանում է հայոց 122-րդ հայրապետի ընտրությունը: Առաջադրված չորս թեկնածուներից առաջին փուլում ամենից շատ ձայներ են հավաքում Ներսես արքեպիսկոպոսը և Երուսաղեմի պատրիարք Զաքարիան: Ընտրությունը տեղափոխվում է երկրորդ փուլ, որտեղ արդեն ակնհայտ էր Ներսես արքեպիսկոպոսի առավելությունը. 1843 թ. ապրիլի 17-ին ընտրությանը մասնակցած 21 ժողովականներից 17-ը իրենց ձայնը տալիս են Ներսես արքեպիսկոպոսի օգտին (Զաքարիա պատրիարքը ստա-

[25] Նույն տեղում, թ. 4:
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում, վավ. 126, թ. 1:

նում է 4 ձայն), և նա ընտրվում է Ամենայն հայոց կաթողիկոս՝ Ներսես V Աշտարակեցի անվամբ:

Ի դեպ, հարկ է նշել, որ Ներսեսը արքեպիսկոպոս Զաքարիային երբեք իրեն հակառակորդ չի համարել, թեպետ վերջինս հանդես էր գալիս որպես հայրապետական աթոռի հավակնորդ: Թվում էր, թե կաթողիկոս ընտրվելուց հետո Ներսեսը պիտի աշխատեր նրան մեկուսացնել հոգևոր գործերից, սակայն Լազարյանների արխիվում պահպանվող այս փաստաթուղթը հակառակն է վկայում. Ներսես Աշտարակեցու նամակն է Ռուսաստանի ներքին գործոց նախարար Լ. Պերովսկուն. «Ձերդ բարեձնություն, Հայ լուսավորչական եկեղեցու Երուսաղեմի պատրիարք Զաքարիան բողոք է հայտնել Երուսաղեմի ռուսական հյուպատոս պ-ն Բազիլի դեմ, ով մերժում է նրան և պատրիարքարանին, ճնշում է նրան զանազան հարցերում, հալածանքների ենթարկում… Տեղեկացնելով այս մասին՝ պարտք եմ համարում խնդրել Ձեզ ուշադրություն դարձնել այս ամենի վրա և Երուսաղեմի հայոց պատիրարքին և հյուպատոսից դժգոհ եկեղեցականներին ցուցաբերել օրինական և արդարացի հովանավորություն: Ներսես: Պատրիարք և կաթողիկոս Ամենայն հայոց: 11.04.1844 թ.»[28]: Հավելենք, որ Լազարյանների արխիվում առկա է Լ. Պերովսկուն ուղղված Ներսես Աշտարակեցու մեկ այլ նամակ՝ գրեթե նույն բովանդակությամբ: «Ներկայումս Կ. Պոլսում գտնվող Սսի միտրոպոլիտ Հակոբը ս/թ փետրվարի 2-ին դիմել է ինձ խնդրանքով՝ …օգնել պաշտպանելու իրեն տեղի կաթոլիկներից, որոնք նպատակ ունեն Սիրիայի կաթողիկոսին զրկել իր եկեղեցու հանդեպ իրավունքներից: Ձերդ բարեձնության ուշադրությանը ներկայացնելով Սիրիայի միտրոպոլիտի նամակը, ես ավելի քան համոզված եմ խնդրել Ձեզ… որպեսզի Կ. Պոլսի Ձեր դեսպանորդն օգտագործի իր գործուն համագործակցությունը… պաշտպանելու թուրքական տարածքներում ապրողներին տեղի կաթոլիկների ճնշումներից, որոնք հովանավորություն են փնտրում Կ. Պոլսի ֆրանսիական առաքելությունում…»[29],-ասվում էր Աշտարակեցու նամակում: Ակնհայտ է, որ վերջին ընդգծումով Աշտարակեցին նպատակ է հետապնդել շահագրգռել ռուսական իշխանություններին՝ տեղի հայերին ֆրանսիական ազդեցությունից ետ պահելու համար:

Լազարյանների արխիվում պահպանվում է նաև Խաչատուր Լազարյանի ձեռքով կազմված վավերագիր՝ Ներսեսի կաթողիկոս ընտրվելու առթիվ մատուցված տոնական ճաշկերույթի մասին: «Էջմիածնում Կաթողիկոսի ընտրության ավարտից հետո ճաշկերույթ տրվեց Սինոդի անդամների, հոգևոր և աշխարհիկ պատգամավորների, Ներքին գործոց նախարարության աստիճանավոր, տիտղոսակիր խորհրդա-

[28] Նույն տեղում, վավ. 145, թ. 1-2:
[29] Նույն տեղում, վավ. 122, թ. 1-2:

կան Հայրապետովի պատվին»[30],- գրված է փաստաթղթում:

1843 թ. մայիսի 27-ին Նիկոլայ Առաջին թագավորը հաստատում է ներքին գործոց նախարար Լ. Պերովսկու՝ Էջմիածնում տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների արդյունքների մասին զեկույցը: Վերջինս 1843 թ. օգոստոսի 13-ին առանձին նամակով հայտնում է Ամենայն հայոց հայրապետի ընտրության կապակցությամբ Նիկոլայ Ա-ի՝ հայ ժողովրդին ուղղված հրովարտակի մասին: «Ծանիցէ ամենայն ազգ Հայոց, զի թէ չեղեալ ի համաձայն խորհուրդ փափագ նոցա, որ յայտնեցաւ հանդիսիւ յէջմիածին ի 17 աւուր ապրիլի այսր 1843 ամի, մի ոք հաստատինք զարհեպիսկոպոսն Ներսէս յաստիճան պատրիարգի յէջմիածնի և կաթողիկոսի Ամենայն Հայոց, օրհնեսցեք ամենաբարձրեալն զծայրագոյն պատրիարգն ի գերագոյն պաշտաման Տեառն առ բարին և փրկութիւն ամենայն սիրեցեալ ի մեջ ազգին հայոց. 10 օգոստոսի 1843: Նիկողայոս: Նախարար ներքին գործոց Լ. Պերովսկի»[31]: Ի դեպ, կաթողիկոս հաստատվելու հրովարտակը և Ալ. Նևսկու շքանշանը[32] հայոց նորընտիր հայրապետը ստանում է նույն օրը՝ 1843 թ. օգոստոսի 25-ին:

Եվ ինչպես կարգն էր, կաթողիկոս հաստատվելուց հետո Ներսես Աշտարակեցին իր երախտապարտությունն է հայտնում Ռուսաստանի կայսր-տիրակալին: Այդպիսի բովանդակությամբ փաստաթուղթ ևս առկա է Լազարյանների արխիվում: «… Ես պարտք համարեցի, ինձ բաժին հասած դժվարին հիվանդությունից հետո, հավաքած առաջին իսկ ուժերի պայմաններում դիմել Ձերդ գերազանցությանը, որպես երկրի գլխավորի, որտեղ ապրում են հայերը, ինչպես նաև որպես Հայոց կաթողիկոսության պահապանի՝ խորապես և թախանձագին խնդրում եմ ընդունել իմ բարեհոգությունը հանդեպ Ձեզ և Ձեր ցուցաբերած հովանավորությունը բոլոր հարցերում…»,-ասվում էր Ներսեսի ուղերձում[33]: Ուղերձում հայոց հայրապետը միաժամանակ իր պատրաստակամությունն ու աջակցությունն է հայտնում ռուսաց տիրակալին՝ հայության հետ կապված հետագա խնդիրների լուծման գործում. «… իմ կողմից ցանկանում եմ հավաստիացնել Ձեզ, սիրելի տիրակալ, որ ես պատրաստ եմ իմ մնացած կյանքը նվիրաբերել եկեղեցու ծառայությանը, մեծ հայրենիքին և բոլոր հնարավոր միջոցներով գործել Թուրքիայում և Պարսկաստանում ապրող հայերի հոգևոր մերձեցման համար, պատշաճորեն ծառայել ռուսական կառավարության և հայ ժողովրդի միջև բարոյական կապն ամրապնդելու համար»[34]:

---

[30] Նույն տեղում, վավ. 15, թ. 1:

[31] Նույն տեղում, թղթ. 107, գ. 44, վավ. 162, թ. 1-2:

[32] Նիկոլայ Առաջինի 1843 թ. օգոստոսի 17-ի հրամանով Ներսես Աշտարակեցին արդեն երկրորդ անգամ (առաջինը 1828 թ. էր) արժանանում է ռուսական բարձր պարգևի՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանի (տե՛ս նույն տեղը, թղթ. 137, վավ. 128ա, թ. 1):

[33] Նույն տեղում, թղթ. 137, վավ. 36, թ. 1:

[34] Նույն տեղում, թ. 2:

Ամփոփենք. մաշտոցյան Մատենադարանի Լազարյանների արխիվում պահպանված վավերագրերը նոր լույս են սփռում 1843 թ. ապրիլին կայացած Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության հարցում: Արխիվում պահպանված վավերագրերը ոչ միայն նոր մանրամասներ են հաղորդում հայոց 122-րդ հայրապետի ընտրության շուրջ ծավալված իրադարձությունների մասին, այլև բնութագրում են այդ ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական կյանքում առկա ուժերի հարաբերակցությունն ու նպատակները:

Բանալի բառեր – *Մատենադարան, Լազարյանների արխիվ, կաթողիկոսի ընտրություն, Ներսես Աշտարակեցի, Խաչատուր Լազարյան, նամակներ, ռուսական կառավարություն, քաղաքականություն*

АЙКАЗ ОГАНЕСЯН – ***Архив Лазаревых: новые подробности выборов католикоса в 1843 г.*** – Хранящиеся в архиве Лазаревых в Институте древних рукописей (Матенадаран) документы проливают новый свет на избрание католикоса, состоявшееся после кончины патриарха Ованнеса Карбеци. В статье рассмотрены исторические, церковные и политические события, имевшие место накануне и во время выборов предстоятеля.

Содержащиеся в документах материалы не только сообщают неизвестные подробности выборов, но и характеризуют тогдашнюю расстановку сил в армянском обществе.

Ключевые слова: *Матенадаран, архив Лазаревых, выборы католикоса, Нерсес Аштаракеци, Хр. Лазарев, письма, русское правительство, политика*

HAYKAZ HOVHANNISYAN – ***The Lazaryans' Archives; New Details about the Election of Catholicos in 1843.*** – The documents stored in the Lazaryans' archive of the Institute of ancient manuscripts – Matenadaran, shed new light on the issue of electing a new Catholicos, after the death of the Catholicos of all Armenians Hovhannes Karbetsi in 1842. The article considers the course of historical, spiritual, and political events taking place on the eve and during the elections of the Armenian Catholicos.

Contained in documents, the historiographical materials not only provide new details of the election of the Catholicos but also characterize the balance of power in the socio-political life of the Armenian society in the period under review.

Key words: *Matenadaran, Lazaryans' archives, election of Catholicos, Nerses Ashtaraketsi, Khachatur Lazaryan, letters, Russian government, politics*

Ներկայացվել է՝ 22.01.2020
Գրախոսվել է՝ 20.04.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020